

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պարոյ 8 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 4 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 3 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 2 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 1 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 1 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 1 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 1 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 1 ՄԷՃ.
Վեցամսեյ Կ. Պարոյ 1 ՄԷՃ.



ՀԱՐԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 14 ՄԱՅԻՍ

ԱԶԳ

Լրագրոյս Մեծ. բաժանորդներէն կը խնդրենք որ անդորրագիրս իրենց ներկայացած ժամանակ լրագրոյս տարեկանը կամ վեցամսեայն վճարելու հաճին:

Արդէն քանիցս ծանուցած ենք թէ լրագրոյս հրատարակութեան ծախքերն ապառիկ չեն. թուղթ, մեխան, բուլ, բոսթա, ցրուիչ, տպագրատան գործաւորք և այլն կանխիկ կը վճարեն: Հետեւաբար դիւրաւ կրնայ երեւակայուիլ խմբագրի մը ներդրութիւնն ու տաղնապն երբոր այս ամենօրեայ անհրաժեշտ ծախքերը վճարելու համար դրամի պէտք կունենայ և չը կրնար ստանալ բաժանորդներէն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արտահանի առման լուրը ցաւալի տպագրութիւն մ'ըրաւ Օսմանեան հասարակաց կարծեաց վրայ: Հինգշաբթի օրը մինչդեռ երեսփոխանական ժողովը քաղաքապետական օրինաց ծրագրին վրայ կը վիճէր, քանի մը հարիւր Սօֆիա խորհրդարանին երկաթեայ վանդակներուն առջեւ գումարեցան, և անոնց կողմէ պատգամաւորութիւն մը ժողովին ներկայանալով Արտահանի առման վերայ բացատրութիւն խնդրեց: Նախագահ Ահմետ Վէֆիկ փաշան պատասխանեց թէ ժողովն արդէն այս խնդրոյս վրայ պէտք եղած միջոցները խորհած էր, և թէ ժողովուրդն երեսփոխանական ժողով ունենալով պէտք չէ որ այս գործերուն միջամեղէ. ուստի յորդորեց զանոնք որ ցրուին, և անմիջապէս նիստը վազեց: Իսկ Սօֆիաները կեցցէ՛ վեհ. Սուլթան գոչելով ցրուեցան, առանց բռնաւ անկարգութիւն մը պատահելու:

Արտահանի առումը կերակի որ երկու պատճառաւ եղած է. նախ՝ լաւ չէ պաշտպանուեր, և ասոր պատասխանատուութիւնն ալ զօրաց հրամանատար Հիւսէյին Սապրի փաշային վրայ կը ձգուի. երկրորդ՝ Ռուսաց զօրքն աւելի բազմաթիւ էին: Մայիս 10 թուով (ըստ Ն. Տ.) կարինէն Լէվընթ Հէրըլտի գրուած նամակ մը արդէն պարզ կուտար թէ Արտահան չարկի կրնար երկար ժամանակ գիւմարել:

Մայիս 24ին 18,000ի չափ Օսմանեան զօրք Հաճի Ահմետ փաշային հրամանաց ներքեւ կարսէն դուրս ելած և դաշտին մէջ յառաջանալ ըսկըստ Ռուսական զօրաց դէմ գնացած էին. ստոր պատերազմէր են

թշնամոյն զօրութեան դէմ, որ աւելի բազմաթիւ էր, բայց յետո նահանջելու պարտաւորուեր են: Օսմանեան զօրաց մէկ մասը կրցեր է կարս քաշուի, բայց մնացեալը Ռուսաց հեծելազօրներէն մինչև Սոգանլը քաշուեր են: Լէվընթի թղթակցին խօսքին նայելով, Պարտէզի մօտ գետակ մ'անձրեներուն պատճառաւ յորդած ըլլալով Օսմ. զօրքն անկէ անցած ժամանակ քանի մը հարիւրի չափը խեղդուեր, և 600ի չափ ալ գերի բռնուեր են Ռուսերէն: Հաճի Ահմետ փաշայի զօրաց կրած այս դժուարութիւնները կարսի մէջ լուեցով՝ օգնութեան համար երեք վաշտ զօրք զրկուեր են, որոց հրամանատարն երբ պատերազմի դաշտն հասեր է, թշնամոյն առաւելութիւնը տեսնելով՝ իւր զօրքը կորստեան չհանգիպեցընելու համար Պէրքալէ քաշուեր է, որոց մօտերը կը գտնուէր նաև Ահմետ Մուխթար փաշա:

Ռուսք երեք ստուար զօրաբանակ կազմելով սահմանագիծին անցած էին: Գլխաւոր զօրաբաժինը կարսի շրջակայքն է. ալ թէն Սիւլայի կողմէն սահմանն անցած և ասոր մէկ մասն Արտահանը պաշարած էր: Արտահանի ամրութիւնները մօտեւ չինուած և քրուբի թնդանթները դուրսած էին հոն ալ. բայց կարնոյ մէջ զինուորական անձինք կը կարծէին թէ Արտահան չկրնար դիմագրել՝ եթէ պաշարող բանակը բազմաթիւ ըլլայ, և պաշարման համար պէտք եղած նիւթերն ունենայ: Ռուսաց ալ թէին մնացեալ մասը Չըլլըրէն անցնելով Պարտէզի վրայ կը քալէր. ձախ թէն ալ երևանէն թօրոք Գալէի և Պալադիտի վրայ քալէր է, և ասոնք առնելով Պալադիտի Գալմաղամ կարգեր է Չափուշ օղլու Շէրիֆ Էֆէնտի առնուն իսլամ մը: Պալադիտի մէջ երկու վաշտ Օսմանեան զօրք կային, որք միայն երկնոյ դէնքերը կրցեր են տանիլ, պաշարները Ռուսաց թողով: Ռուսաց ձախ թէին մէկ զօրաբաժինը դէպ 'ի վան կը յառաջանար, բայց 'ի սկզբան պարտաւորուեր էր ետ դառնալ՝ ձիերուն համար բաւական խոտ չկրնալով գտնել:

Վերոյիշեալ նամակին նայելով, Օսմանեան զօրքը ցրուեալ վիճակի մէջ էր. Արտահանի մէջ 15 վաշտ զօրք կայ եղեր (ըստ այլոց 12 վաշտ), Պարտէզի և Եֆէնթէօյի մէջ 14 վաշտ, մէկ մասն ալ Տէլի-Պապայի կիրճերը կամրացնէր: Կարնոյ մէջ իսկ չգիտցուիր եղեր թէ կարսէն դուրս եղած Օսմանեան զօրքն որ կողմ կը գլուխուէր, Ահմետ Մուխթար փաշան մերթ Պարտէզ և մերթ Եֆէնթէօյ կը գլուխուէր, ուր գնացեր է նաև Ահմետ ֆէմալ զօրապետը:

Թշնամոյն յառաջնորդացութեան գլխաւոր առարկայն կարին է, բայց կերկի որ վանայ կողմն ալ կը քալէ,

քանզի Լէվընթ Հէրըլտի մասնաւոր թղթակցը կարինէն 11/23 մայիս թուականաւ կը հեռագրէ թէ վանայ մօտերը թուղա դիւղը խաղախներ հասած են. թէ Ռուսք կարինէն քանի մը ժամ հեռի են, և յառաջ ապահ զօրաց մէջ շարունակ կռիւներ կը լլան: Պարսիկները Սալմաստի մօտ 10000 ի չափ հետեւակ և 2000 ի չափ հեծեալ զօրք պատրաստած են եղեր՝ իրենց երկրին չեղրքութիւնը պաշտպանելու համար:

Գանձի կողմը պատերազմական գործողութիւնները կ'երկարաձգին, և կերեի որ Յուրերը տակաւին շատ յորդեալ ըլլալով՝ Ռուսք այս մեծ գետն անցնելու դժուարին գործողութիւնը քանի մ'օր ալ ետ ձգելու գնէին: Չարն և իւր թագաւորաւորորդին, որ մայիսի 23 ին հարաւային բանակը պիտի երթային, իրենց ուղեորութիւնը մինչև յունիս 2 յետաձգած են, և կը կարծուի որ իրենց գաղութէն ետև Ռուսաց զօրքը Գանձի անցնելու պիտի ձեռնարկէ: Բոլոր տէրութեանց փափաքը պատերազմին սահմանափակումն ըլլալով, և մանաւանդ Աստրիա իւր սահմանակից Սերվիոյ երկրին նորէն պատերազմի առաջադէպ ըլլալուն դժկամակութիւն ցուցնելով, Ռուսաց կայսրն յատուկ նամակ մը գրած է Միլան իշխանին յորդորելով որ պատերազմին չմասնակցի, և հերքեր է համապատասխան չափազանց դադափարները: Բայց կրնայ ըլլալ որ յիշեալ կայսերական նամակը պարզապէս քաղաքականութեան գործ մ'ալ չլլայ, որովհետև Ռուսիա կարելի եղածին չափ կ'զգուշանայ համապատասխան գաղափարներն յայտնապէս պաշտպանելով ըստ Եւրոպայի կասկածներուն ուժ տալէ, որոյ վախճանը կրնայ իրեն դէմ մեծ ընդդիմութիւն մը հանել: Այսու ամենայնիւ Ռուսիա 'ի մասնաւորի գործադրելու ձեռնարկած է՝ ինչ որ ընդհանուր առմամբ կը մերժէ:

Հեռագիրը զարմանաց արժանի լուր մը կուտայ: Անդգիտական կառավարութիւնն հրաման զրկած է Ալէքսանդրիա որ ութսուն հազար զօրաց համար պաշար պատրաստուի, ուրկէ կը հետևեցուի թէ Անդգիայէն կամ Հնդկաստանէն նոյնչափ թուով Բրիտանական զօրք պիտի զրկուի յեղիպոսոս, բայց ինչ պատճառաւ և նպատակաւ, այս չգիտցուիր: Եղիպոսոսի վրայ ինչ փոսնգ կրնայ ըլլալ: Ստոյգ է որ Եղիպոսոս՝ իբրև Օսմանեան Գրան հպատակ՝ Ռուսիոյ հետ պատերազմական վիճակի մէջ է. իբրտիկն զօրքն Օսմանեան զօրաց հետ 'ի միասին Ռեմիլիոյ պատերազմը մղեցին, և Ռուսիոյ դէմ ալ պիտի պատերազմին, ուստի պատերազմական

օրինօք Ռուսիա կրնայ Ալէքսանդրիոյ նաւահանգիստը պաշարման վիճակի մէջ դնել, Եղիպոսոսի և Սուէիչի ջրանցքին վրայ յարձակիլ: Բայց Ռուսիա դիտէ որ այսպիսի յարձակում մ'Անդգիոյ շահուց դէմ է, և առայժմ բնաւ այնպիսի դիտաւորութիւն մը չցուցներ: Այս պատճառաւ Անդգիոյ այս ձեռնարկին անմիջական պէտք մը չտեսնուիր, և հաւանական է որ այս հեռագիրն ալ այն բազմաթիւ երեւակայական հեռագրաց կարգէն է, որք ստէպ հրատարակեցան Անդգիոյ պատրաստութեանց և ուրիշ խնդրոց նկատմամբ: Ստոյգ է որ Անդգիոյ չեղրութիւնը պիտի դադրի՝ երբ իւր շահերը փոսնգի մէջ իննան, բայց այս փոսնգը՝ որ Կ. Պոլսոյ կամ Սուէիչի ջրանցքին վրայ յարձակում եղած ժամանակ պիտի ծագի, տակաւին հեռի կը թուի: Խնդիրը Ռուսաց յաջողութեան և այն յաջողութիւնը գործածելու եղանակէն կախած է. եթէ Ռուսք յաջողեւ ետև՝ Եւրոպական մեծ տէրութեանց շահերուն դէմ գործեն, տարակոյս չկայ որ պատերազմն այն ատեն կրնայ ընդհանրանալ. սակայն քանի որ տակաւին այն կէտը հասած չենք, Եղիպոսոս զօրք զրկելու զրոյցը կանխահաս կը թուի, թէ և Անդգիոյ պատրաստութիւններն ստոյգ են:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 22 մայիս.
Երեսփոխանաց ժողովին լուծման և հին կուսակցութեանց յաղթանակներն կ'ապստօնէ:
Գերմանիոյ և Իտալիոյ դիրքը կ'առաւելի նշաններ ցոյց կուտայ: Այս երկու տէրութիւնք ապագայ պատահականութեանց կը պատրաստուին:

Պրիլին 22 մայիս.
Պիտարը իշխան յանկարծ մեր քաղաքն եկաւ՝ Գաղղիոյ մէջ անցած անցից վրայ կայսեր հետ խորհրդակցելու:

Պրեքէ 22 մայիս.
Ժողովները Ռուսիոյ անկախութեան առաջարկութիւնն ընդունելով, քաղաքի զօրակներով զարգարեցաւ:

Վիեննա 23 մայիս.
Կառավարութեան կուսակցից թերթերը Ռուսիոյ անկախութեան յայտարարութիւնը պարտաւորով, կը հաւատեն թէ տէրութիւնը չարտի ձանձնեց այդ անկախութիւն:

Փարիզ 25 մայիս.
Տօն Քարլոս Գաղղիայէն մեկնելով Աւստրիա դնաց:

Տէլիուշ ծովապետը ծովային գործոց նախարար անուանեցաւ:

Բեղրապոլի 24 մայիս.
Ս. Մանու Ռուս լրագիրը կը յայտարարէ թէ Ռուսիա Սերվիոյ չեղրութիւնը պիտի յարգէ:

Վալինկոն 25 մայիս.
Ս. Մերկիայի Միացեալ-Նահանգացի զօրութեան յայտարարութիւնը տակաւին որոշուած չէ: Պ. Եւրպիս քննու

թեան առած է զայն: Այլ կարծուի թէ կառավարութիւնը պիտի որոշէ թէ չե՞ղբութեան յայտարարութիւնը հարկաւոր չէ:

Գահիրէ 24 մայիս.

Իշխանազուն Հասան փաշան Ալէքսանդրիա դնաց շողենաւ նստելու և Ա. Պօլիս երթալու համար:

Վիէննա 24 մայիս.

Ռուսիա յայտնեց թէ պատերազմէն ետե Դանուբի նաւարկութեան լիակաւոր ազատութիւնը պիտի յարգէ:

Բեռլին 24 մայիս.

Լրագիրքը դժգոհութեամբ կը խօսին Գաղղիոյ վերջին անկոյճ դէմ:

Սթէնը 24 մայիս.

Անգղիական նաւատորմն այս գիշեր Բալթիկայի նաւահանգստին մէջ երկաթ նետեց:

Մեծ յոյս կայ որ աւաղակութեան վերաբերեալ դէպքը բարեկամաբար կը կարգադրի:

Փարիզ 25 մայիս.

Մաք-Մաճոն մարաշլիստը դալ տարւան արուեստահանդէսին վերաբերեալ ինտելիցենտներն աչքէ անցունելով, յայտնեց թէ արուեստահանդէսը չպիտի յետաձգուի և թէ 1878ին որոշեալ ժամանակին պիտի բացուի:

Պուքըշ 25 մայիս.

Կառավարութիւնը թշուառաբար կու խելու և 30 միլիոն ֆրանք արժէք ունեցող պետական սեփականութիւններ վաճառելու վերաբերեալ առաջարկութիւն մը ներկայացուց ժողովին:

Լոնտոն 25 մայիս.

Օսմ. ֆոնս.	8 1/8
Փոթ.	1865 8 3/4
"	1869 8 1/2
"	1871 28 1/2
"	1872 14 5/8
"	1873 8 1/8
" Եղիպտ.	36 3/8
Անգլ. ֆոնս.	95 1/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի օրը Օսմ. երեսփոխանական ժողովին ներկայացեալ պատուաւորութեան մեկնելէն ետե՝ նախագահ Ահմէտ վէֆիդ փաշան Բ. Դուռը գնաց և Մեծ—Եպարքոսին հետ տեսակցեցաւ: Ասոր վրայ Մեծ—Եպարքոսն իրաւունք փէօշլին երթալով վեհ. Սուլթանին ներկայացաւ փէշ մ'ետքն Ահմէտ վէֆիդ փաշան ալ իրաւունք փէօշլը կանչուելով՝ գնաց, և հոն Մեծ Եպարքոսին հետ ի խորհուրդ դուստրեալ գտաւ Շէյխ իւլ իսլամ էֆէնտին, պատերազմական և ծովային զօրքոց նախարարները, թնդանօթարանի վերատեսուչն և աստիկանութեան նախարարն, և անոնց խորհրդին մասնակցեցաւ:

Սոյն գումարման և խորհրդակցութեան արդիւնքն եղաւ մայրաքաղաքի և արուարձաններուն պաշարման վիճակի կամ զինուորական կառավարութեան ներքե գրուելն, որ նոյն իրիկունն եպարքոսական հրամանագրով հրատարակեցաւ:

« Ինչպէս որ ամեն սահմանադրական ազգաց մէջ սովորութիւն է վտանգաւոր ժամանակաց մէջ, կըսէ Եպարքոսական հրամանագիրն, և ինչպէս որ Օսմ. Սահմանադրութեան 113րդ յօդուածը կը տրամադրէ, մայրաքաղաքս և արուարձանները կայսերական հրամանաւ պաշարման վիճակի մէջ գրուեցան: Հետեւաբար այս վայրկեան քաղաքային վարչութեան իշխանութիւնը զինուորական վարչութեան ձեռքը կանցնի: Պաշարման վիճակի վերաբերեալ կանոնադրութիւնն՝ որ երեսփոխանական ժողովոյ հաւանութիւնն ստացած է, քիչ օրէն պիտի հրատարակի: Յիշեալ կանոնադրութեան համեմատ՝ այն անձինք՝ որ գործով և կամ խօսքով հասարակաց խաղաղութիւնը վրդովել ջանան, պատերազմական ատենի մ'առջև պիտի դատուին համառօտի: Եթէ յանցաւորութիւնն

հաստատուի, խռովարարները մահուամբ, չլիարկալայ տախտակութեամբ, բերդաքեղ կ'ախարհուի կամ բանտարկութեամբ պիտի պատժուին ըստ չափու ծանրութեան յանցանաց:

« Զինուորական իշխանութիւնը կըընայ բնականօրէն ու սովորութեամբ թերքը գրաւել, պէտք եղած ժամանակ՝ ի գիշերի և ի տունջեան տուներու մէջ խուզարկութիւններ ընել, ուր որ հարկաւոր դատի կանգածելի մարդիկը, գէշ նախընթաց ունենցողները, ընդվայրայածներն աքոսրել, խռովութիւն սերմանող և հասարակաց կարծիքը յուզող յօդուածներ հրատարակելու համարձակող լրբադրներ խախտել, և ամեն գումարումները ցրուել: »

Սթամբուլ լրագիրը կըսէ թէ օտար տէրութեանց գետնանները՝ պաշարման վիճակի գրութիւնն իրենց ազգայնոց համար ընդունելու վրայ խորհուրդ պիտի ընեն, և կը յարէ թէ Բերայի համար բացառութեան խօսք կայ:

Վագրթ լրագիրն իւր երէկուան թուով կը ծանուցանէ թէ Արտահանի հրամանատար Հիւսէյին Սապրի փաշայի կողմէ Բ. Դուռն եկած հեռագիր մը՝ հետեւեալ տեղեկութիւնը կուտայ:

« Թշնամին իւր բոլոր զօրութիւնը Պայազլիտի կողմը դուստրա՝ էր, կարսի շրջանականերէն ալ բազմաթիւ զօրագունքներ բերել տալով:

« Սոյն զօրութիւնն՝ որ յիսուն հազար պատերազմիկ կը հասնէր, երեք զօրաբանակի բաժնելով, երեք այլ և այլ կողմերէ Արտահանի վրայ յարձակեցաւ:

« Արտահանի պահպան զօրքը քաղաքի և հզօրագէտ գիւմարեց առաջին և երկրորդ զօրաբանակներուն և հինգ վեց հազար թշնամի ըսպաննեց, բայց երբոր երրորդ զօրաբանակն առաջիններէն աւելի բազմութեամբ վրայ հասաւ, մեր զօրքը թըւով խիստ քիչ ըլլաւ, և քաղաքը հարկադրեցաւ կորստեամբ: »

Յիշեալ լրագիրն իւր այս աւուր թերթին մէջ ալ կըսէ թէ Արտահանի առջև տրուած սաստիկ պատերազմին մէջ կիսաբաժնի զօրավար (լիւտ) մը, երկու գնդապետ (միւսայ) մէկ երկու հազարապետ և ուրիշ սպաններ մեռեր, հրամանատար Հիւսէյին Սապրի փաշան ալ գլխէն վիրավորուեր է:

Ասկէց կը հասկնուի որ իշխեալ հրամանատարը քաղութեամբ պատերազմեր է Ռուսաց դէմ, բայց վերջապէս անոնց քառապատիկ և աւելի զօրութիւնէն ընկճեր է:

Յիշեալ լրագիրը լուր կուտայ նաեւ թէ Կարսի առջև պատերազմը կը շարունակէ ամենայն սաստիկութեամբ:

Օսմ. երեսփոխանական ժողովոյ չորեքշաբթի աւուր նստին մէջ Արտահանի առման լուրը բաւական խորհրդածութեանց նիւթ եղաւ, որոց մէջ մեծ տեղ մը բռնեցին Կարսոյ Հայ երեսփոխան Համադապ էֆէնտիի տուած տեղեկութիւններն և ըրած խորհրդածութիւնները:

Յիշեալ էֆէնտին՝ Արտահանի ամբարանաց համար քանի տարիէ ի վեր եղած զոհողութիւններն ու տարուած խնամքները նկարագրելով յայտնեց թէ Գրիմի պատերազմին ժամանակ Արտահան աշտմու չափ զօրութիւն չունենալով երկու տարի պաշարման դիմացաւ. իսկ հիմա աւելի ամուր և հզօր վիճակի մէջ գրուած

ըլլալով չկրնալ դիմանալ իւրեքի դէմ է: Ռուսի հետեցուց թէ պատճառն Արտահանայ զինուորական հրամանատարին ապկարութիւնը կամ գաւառահանութիւնը միայն կրնայ ըլլալ: Այս մասին հարկ է օր, ըսաւ, Սպարապետ փաշան գայ և բացատրութիւն տայ ժողովին:

Համադապ էֆէնտիի այս յայտարարութիւնն երկրորդեցին քանի մ'իսլամ երեսփոխանք, և ժողովն ընդհանուր հաւանութեամբ որոշեց որ տէրութեան նախարարներէն ու մանք և Սպարապետի դրան պաշտօնատար մը հետեւալ աւուր նստին ներկայ գտնուին և Արտահանայ առնուելուն վրայ բացատրութիւն տան:

Մայրաքաղաքի բնակիչները զինուորագրութեան նիւթարկելու համար պէտք եղած օրէնքը պատրաստելու պաշտօն ունեցող յանձնաժողովն իւր գործն աւարտելու վրայ է: Յիշեալ օրէնքն Օսմ. երեսփոխանութիւնէն ընդունուելէ և վեհ. Սուլթանէն հաստատուելէ ետե պիտի գործադրի՝ մայրաքաղաքի առաջին շրջանակէն սկսեալ: Կըսուի թէ այս անգամ զինուորագրութեան ենթարկուելիք երիտասարդներն են 1268—1274ին ծնածները, որք 19էն 25 տարեկան են:

Կըսուի նաեւ թէ զինուորական ծառայութեան ազատ մնալու տուրքն 50 օսմանեան լիւր պիտի ըլլայ:

Ռստիկանութեան պաշտօնատուներ հրատարակեալ ազգ մը կը ծանուցանէ թէ տէրութեան ոչ մահմէտական ժողովուրդներէն ռստիկանութեան զինուոր առնուլ որոշուած ըլլալով, փափաքողներն Ռստիկանութեան պաշտօնատուներ կազմուած խորհրդին պէտք է ներկայանան:

Ոչ—մահմէտական ռստիկանք ալ մի և նոյն իրաւունքն ու պարտեալութիւնը պիտի ունենան մահմէտականաց հետ:

Պաշտօնական ազգ մը կը ծանուցանէ թէ տէրութեան պաշտօնատարներէն ոմանք իրենց ձիրք կայսերական բանակին չնուիրելու համար վաճառած կամ փախուցած ըլլալով, կառավարութիւնը պէտք եղած քննութիւնն ու խուզարկութիւնը պիտի ընէ և անոնց վաճառած կամ պահած ձիրքը ձեռք անցունելէ զատ՝ անոնցին ալ պիտի հրատարակէ:

Մայրաքաղաքի շրջակայ գիւղերու և գիւղաւորագէտ վոսիտի ծովեզերայ գիւղերէն մէջ՝ զինուորական սպայից ձեռք մէկ մէկ վրան կանգնուեցան, կատարը մահիկ և խաչ գրուած, որպէս զի կամաւոր դրուի ուղղորդեն այն վրաններուն ներքե երթալով գրուին՝ առանց կրօնի խորութեան:

Չէրքէզատանի ազատութեան համար զէնք առնուլ ուղղող Չէրքէզաց սպառազինութեան ծախք հայթայթելու նպատակաւ յանձնաժողով մը կազմուեցաւ քանի մը Օսմանեան երեսփոխաններէ՝ ընդ նախագահութեամբ Ահմէտ վէֆիդ փաշային: Սոյն յանձնաժողովին անգամ է նաեւ Կարսոյ երեսփոխան Համադապ էֆէնտիի Պալլարեան:

Օսմանեան հեռագրաց վերատեսչութիւնը կը ծանուցանէ թէ Եւրոպական թուրքոյ հեռագրական կալաններուն մէջ թուրքերէնէ զատ ուրիշ լեզուով հեռագիր չպիտի ընդունուի մինչև ի նոր տնօրէնութիւն:

Վիրաւորեալ զօրականաց օգնութեան համար ձէնէվայի միջազգա-

յին դաշնագրութեան տրամադրութեանց համեմատ Օսմանեան ընկերութիւն մը կազմուեցաւ, որ անցեալ ապրիլ 16ին ընդհանուր ժողով դուստրելով իւր դիւանը կազմեց հետեւեալ կերպիւ:

Նախագահ Արիֆ պէյ:

Դեր—Նախագահ Տօքթոր Սաւէլ:

» » Բ. Նուրեան էֆէնտի:

Գանձապահ Մ. Հ. Ֆօսթեր:

Քարտուղար Ֆէրիտուն պէյ:

Միանգամայն օգնութեան մասնաժողով մը կազմեց վեց անձերէ, որք են՝

Պ. Պ. Տօքթոր Տ. ֆէշտիմալեան, Տ. Տիքսօն. Սէփաթօբուլ, Տօքթոր Ազիզ պէյ, Ֆայիք փաշա, Մ. Լըվալ:

Սոյն ընկերութիւնն հրաւեր կը կարգայ համայն Եւրոպիոյ Կարմիր-խաչի ընկերութեանց, բարեգործական ընկերութեանց և ամեն գիւթախրատ անձանց՝ որպէս զի սոյն մարդասիրական գործին աջակցին թէ՛ անձնական նուիրատուութեամբ և թէ՛ նպատակեց հաւաքմամբ:

Պաշտօնական կերպիւ կը ծանուցուի թէ Գումարիկեան քերց սպանման դատն յառաջիկայ երկուշաբթի օրը պիտի տեսնուի հրապարակաւ Բ. Դրսն հեղեանագատ ատենին մէջ: Ամբաստանեալ Հաճի Վասիլի կողմէ Սարաճեան թուրք էֆէնտին և Չէրքէզ Ահմէտ պէյի կողմէն Եւրոպական Աւետիս էֆէնտին պիտի փոխադրանեն:

Երուսաղէմայ Սիօն ամաստերին վերջին ապրիլի թուոյն մէջ հետեւեալ լուրերը կը կարդանք:

Ամսոյ 18ին Դամասկոսէն գրուած նամակ մի հետեւեալը կը պատմէ: Օր առաջ Բերիտայի զօրք մի Պիթ Պաղաւին զէնք ծախողի մը խոնարհէն դաշոյն մի կառնէ նայելու պատրուակաւ և քովը կեցող երկու հրէի կը զարնէ. մին անմիջապէս մեռաւ, միւսը տակաւին ողջ է. զարնող զօրքը հարցաքննութեան մէջ չուարեցաւ. բայց երբ ոճաւորներն կախուելու լուրը տարածուեցաւ, անցեալ կիւրակէ Սարային գումար թուղթ մի տեսնուեցաւ Տաճիկներէն գրուած, որոյ իմաստն էր. եթէ այս զօրքը հրէին համար սպաննէք, 1860ին քրիստոնէից ըրածներէն աւելի գէշ կընեմք հրէայնները: Կառավարութիւնը մինչև ցարդ այդ մասին բան մի չըրաւ և հրէայք վրէժխնդրութենէն սաւաւ ինչ կ'առեցան:

Պերութի լրագրերը այս դէպքի մասին գրելով ըսած էին, որ Դամասկոսի և Բերիտայի հրէայք գիր տուած են կառավարութեան թէ մեք արեւմտեան գիւղացի պահանջեր բայց կառավարութիւնը պատասխանած է, թէ այդ իրենց կը վերաբերի:

— 21ին Լիւթի մէջ, որ Ռէֆէի մէկ գիւղն է, 500 քրիստոնեայ և 3-4000 տաճիկ բնակչւք, տաճիկ աղայք քրիստոնէից զանապառն հայհոյութիւն ընելով՝ եկեղեցին կը քարկոծեն. քրիստոնեայք չտոնելով այս ծանր նախադրմանց, չափահաս տաճիկներու հետ բանակուել կը բռնուին նախ և ապա իրարու կը զարնուին. բայց բարեբաղդաբար տնջուան. եղբուրութիւնը այս տեղ իմացուելով կառավարութիւնը կը հեռագրէ Յոպպէի Գայմադաւին, որ ժողովի անդամաց ընկերութեամբ Լիւթ երթայ. այս տեղէն և զապթիէի հազարապետը զրկուեցաւ, որպէս զի այս գէպքին պատճառը և տեղի տուողները վրէժաւ են և քննեն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

